

## ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «Ի ԼԵՒՈՆ ՈՐԴԻ ՀԵԹՄՈՅ Ա.» ԵՐԳԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1852ին Վենետիկում լոյս տեսաւ Հայր Ղեւոնդ Ալիշանի «Հայոց երգ ռամկական» երկեղու (անգլերէն-հայերէն) երգարանը<sup>1</sup>: Ժթ. դարու երկրորդ կէսին ազգային արուեստը մեծ վերելք էր ապրում, եւ մի շարք հայ մտաւորականներ, ինչպէս նաև Հոգեւորականներ, ծաւալեցին բանահաւաւքչական գործունէութիւն, որի արդիւնքում գրառուեցին մեծ քանակութեամբ ժողովրդական երգերի տեքստեր, որոնց մի մասն ընդգրկուեց երգարաններում եւ հրապարակուեց: Այդպիսի անդրանիկ երգարաններից մէկն էլ Հայր Ղեւոնդ Ալիշանի կազմած «Հայոց երգի ռամկական» ժողովածուն էր, որտեղ զետեղուեցին հայ երգաստեղծութեան մի շարք ուշագրաւ օրինակներ: Ժողովածուում Ալիշանն ամփոփել էր Վենետիկի, Վիեննայի, Փարիզի, Լոնտոնի մատեաններում պահուող հայ միջնադարեան ձեռագրերից անձամբ քաղած եւ Ժթ. դարի բանաւոր աւանդոյթից վկայած շուրջ երկու տասնեակ ժողովրդական երգեր, որոնք դրուեցին ազգային եւ միջազգային լայն շրջանառութեան մէջ<sup>2</sup>: Սակայն, բացի երգարան լինելուց, Ալիշանի կազմած այդ տաղարանը մէկ այլ «առաքելութիւն» ունէր:

Նոյն 1852ի Յունուարի 18ին, Վենետիկի Մխիթարեան միաբանութեան վարչական ժողովի որոշմամբ Հայր Ղեւոնդ Ալիշանը մեկնեց Լոնտոն: Մուրատ-Ռափայէլեան վարժարանի համար նախաձեռնուած էր գնել նոր շէնք, որն ի տարբերութիւն

1 ԱԼԻՇԱՆ, Հ. Դ., Հայոց երգ ռամկական, Վենետիկի, Ս. Ղազար, 1852 (Armenian Popular songs. Translated into english. By the R. Leo M. Alishan D.D., of the Mechitaristic society, Venice, S. Lazarus, 1852):

2 ՅԱՐՈՒԹԻՒՆԸՆԸ, Ս., Ղեւոնդ Ալիշանը եւ հայոց երգերն ու հաւատալիքները // «Բազմալեպ», 1-4, 2001, Վենետիկի, Ս. Ղազար, 234:

գործող շէնքի<sup>3</sup> աշակերտների համար ունէր աւելի բարենպաստ պայմաններ եւ ներքին կողմից ընդարձակ այգիներ: Վանքի վարչութիւնն ի օգուտ կրթական հաստատութեան, շէնքը վարձելու փոխարէն որոշեց այն գնել եւ անհրաժեշտ գումար ձեռք բերելու նպատակով կազմակերպեց Հ. Ղ. Ալիշանի ուղեւորութիւնը դէպի Մեծ Բրիտանիայի մայրաքաղաք<sup>4</sup>: Ալիշանի ձեռքին էր «Հայոց երգ ուամկական» նորաթուլի ժողովածուն: Պատահական չէ, որ երգարանն ընծայագրուած էր Լոնտոնում Կոստանդնուպոլսի հիւպատոս, «Բարձրագոյն դուռ ընդհանուր խորհրդական» եւ դիւանագէտ Էդուարդ Զոհրապին (To Edward Zohrab esq., consul general of the sublime porte).

«Ներկայացնելով բրիտանական հասարակութեանը հայկական ժողովրդական երգերի հաւաքածուի սյն հատոր, մենք կարծում ենք, որ չենք կարող այն նուիրել մի անձնաւորութեան, որ Ձեզն ից աւելի արժանաւոր լիներ. Ձեզ, որ մեր ազգի ամենանշանաւոր ներկայացուցիչն է Մեծքրիտանիայի մայրաքաղաքում: Մէկը՝ որն իր դիւանագիտական բազում հոգսերի եւ դժուարութիւնների ընթացքում հանգիստ է գտնում մշակոյրով զրադուելով: Այն խոնարի ակնածնելը, որ Դուք վայելում էք մեր միարանութեան անդամների կողմից, որոնք ժամանակ առ ժամանակ այցելում են Մեծքրիտանիա, մեզ հնարաւորութիւն ընձեռնեց հրապարակաւ ազդարարելու այդ բարեկամութիւնը, որ գոյութիւն ունի մեր միջեւ՝ այն ուժեղագոյն զգացումը, որ կապում է նոյն ազգի անդամներին օտար երկրում: Յիշեալ բարեկամութիւնն ու ակնածնելը, որ գոյութիւն ունի Ձեր նկատմամբ, անկասկած բաժանում են նաև անգլիացի մտառականները, որոնք ուշադրութեամբ եւ սիրով ընդունում են մեր այս փոքրիկ աշխատանքը:

Լոնտոն, 22 Օգոստոսի, 1852»:

- 
- 3 Խօսքը Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանի մասին է, որ հաստատուել էր Ժ. դ. կառուցուած Վենետիկի գեղեցիկ բնակելի տներից մէկում՝ Կա Պեղարոյի պալատում (Palazzo Ca'Pesaro):
  - 4 Մուրատ-Ռաֆայէլեանի կտակը, որ ստեղծուել է մատրասահայ երկու խոշոր ձեռնարկատէր Ռաֆայէլ Լարամեանի եւ նրա փեսայ՝ Սամուէլ Մուրատեանի անձնական միջոցներով, գտնուում էր Լոնտոնում եւ պէսք է ծառայէր հայ կրթօջախներ ստեղծելու եւ զարգացնելու գործընթացին: Միխթարեան միարանների աշակցութեամբ, Խաղաղայի Պատուա Քաղաքում, 1836ին հիմնադրուեց առաջին հայկական դպրոցը (տե՛ս ԴԱՒԹԵԱՆ, Ռ., Սամուէլ Մուրատեամը եւ մրա անուան վարժարանը, «Լրաբեր», 1990, N 9, 65-73):

Այս «բանակցութիւնները» Հայր Ալիշանի դիւանագիտական խոչոր յաղթանակներից մէկն էր, որի արդիւնքում Մուրատ-Ռափավայշէւան վարժարանի բարերարներից մէկի աջակցութեամբ յաջողուեց ստանալ 125.000 ֆրանկ, որն էլ ապահովեց ուսումնական նոր չէնքի՝ Զէնոբիո (Ca' Zenobio) պալատի ձեռքբերումը<sup>5</sup>:

«Հայոց երգի ոամկականք» ժողովածուի նախաբանն ու ներածական խօսքը, ինչպէս նաև ընդգրկուած բոլոր երգերի ծանօթագրութիւններն անդիւրէն էին. երկլեզու էին միայն երգերի բանաստեղծական տեքստերը՝ անդիւրէն-հայերէն: «Բրիտանացի ընթերցողին» ուղղուած իր խօսքում Ալիշանը գրում է.

«Բրիտանացի ընթերցողն, ով յայտնի է իր հետաքրքրասիրութեամբ, եւ որի պրատուն միտքը մշտապէս մղել է նրան ուսումնասիրելու Արեւելքը, իր ձեռքում բռնել է «Հայ ժողովրդական երգերի» այս փոքրիկ ժողովածուն: Աներքելի է, որ Արեւելքի հնագոյն պետութիւններից մէկն իրենց արդարացիօրէն համարող հայերը, որոնք մի երկարատես ժամանակաշրջան նրաբարուեստ ու ծաղկուն գրականութիւն ունեցող ժողովուրդ են եղել, պէտք է որ այսօր աւելի առատ ու բարձրաշխարհիկ արուեստ ունենային: Սակայն, պէտք է հաշուի առնել, որ այդ ժողովրդին յանախակի պատուհասած կենսուրա իրադարձութիւնները, բազում բարբարոս ցեղերի հետ բախումները եւ օտար տիրապետութիւնները յանգեցրել են արուեստների ու գրականութեան անկման եւ մարել Արարատի որդիների բանաստեղծական կրակը:

Յոյս ունենք, որ այս համեստ եւ գուտ նմուշային ժողովածուն, որում ներառուած են եւրոպական լեզուով առաջին անգամ թարգմանուած ստեղծագործուրթիւններ, իր տեղը կը գտնի լուսաւորեալ ժողովրդի սրտում, ժողովրդի, որն առանձնակի խանդավառութեամբ է ընդունում Հին Արեւելքի ամէն մի անկիւն պատկերաւոր ներկայացնելու ցանկացած փորձ»<sup>6</sup>:

**Ժողովրդական լեզուով շարադրուած այդ երգերի բանաստեղծական տողերը բարբառային հայերէնով են, թէեւ այդ բարբառներից շատերը բաւական մօտ են գրական կամ դասական լեզուին:**

5 Տե՛ս ԵՐԵՄԵԱՆ, Ս., Կենսագրութիւն Հ. Ղ. Մ. Ալիշան վարդապետի, Վենետիկ, Ս. Ղազար, 1902, 35:

6 ԱԼԻՇԱՆ, Հ. Ղ., Հայոց երգի ոամկականք, Վենետիկ, Ս. Ղազար, 1852, (Armenian popular songs, Venice, S. Lazarus, 1852), նախարան, (անգլերէնից թարգմանութիւնը մերմ է):

**Ալիշանի** տաղարանում՝ զետեղուած բոլոր օրինակները (թուղվ 19 երգ) ուշադրաւ են եւ ուսումնասիրութեան ու վերլուծման կարիք ունեն<sup>7</sup>: Սակայն առանձնակի հետաքրքրութիւն է ներկայացնում «Ի Լեւոն որդի Հեթմոյ Ա.» պատմա-վիպաքնարական առաջին երգը, որի հիմքում իրական պատմական դէպքեր եւ հերոսներ են՝ Կիլիկիոյ Հեթում Ա. արքան (1215-1270) եւ նրա որդին՝ Լեւոն Գ. թագաւոր (1236-1289): Որքան էլ զարմանալի թուայ, բայց պատմական երգերը խիստ սակաւաթիւ են եւ հայ բազմադարեայ պատմութիւնից երգերի տեսքով՝ մեզ գրեթէ ոչինչ չի հասել: Այս առիթով կոմիտասագէտ Ռոբերտ Աթայեանը գրում է. «Բուն պատմական, լինի հին, համեմատաքար նոր կամ նորագոյն ժամանակների երգեր կոմիտասի գրառումներում ներկայումս չեն երեւում, եթէ նկատի չունենանք այնպիսի բացառութիւններ, որպիսիք են օրինակ, «Թաղամճ էկաւ», կամ «Խնուս գեղի մէջտեղը», որ դժուար է ժանրի տիպական օրինակներ համարել»<sup>8</sup>: Անուանի երաժշտագէտն իրաւացի է, քանզի պատմական երգեր չեն երեւում ոչ միայն կոմիտասի գրառումներում, այլ առհասարակ հայ ժողովրդական երգաստեղծութեան շտեմարանում, եւ այս առումով Ալիշանի հրապարակած Լեւոն արքայի մասին երգը եզակի արժէք եւ բացառիկ նշանակութիւն ունի:

Պատմական երգի հիմնական խնդիրն ու նպատակը՝ արագ արձագանքել պատմական իրադարձութիւններին եւ դէպքերին, արտացոլել հասարակական, պատմական եւ որոշ չափով նաև քաղաքական յարաբերութիւնները: Սակայն, ի տարբերութիւն վիպական եւ էպիկական երգերի՝ պատմական երգերի զգալի մասի կեանքը կարճ է. այդ հանգամանքը պայմանաւորուած է երգում դրսեւորուող իրադարձութիւնների տեւողականութեամբ եւ անցումնային բնոյթով, քանզի իրաքանչիւր պատմական միջադէպի, կամ թէկուզ եւ խոշոր իրադարձութեան՝ յաջորդում է նոր, եւ նախորդը ակամայից կորցնում է իր արդիականութիւնը<sup>9</sup>:

7 Երգարանում ընդգրկուած ժողովրդական երգերը (միայն բանաստեղծական տեքստ) դասաւորուած են ըստ ժանրերի՝ պատմա-վիպաքնարական, ողբեր, հարսանեկան, անտունի եւն:

8 ԿՈՄԻՏԱՍԱ, Երկերի ժողովածու (այսուհետ՝ ԵԺ), հ. 10, խմբ.՝ Ռ. Աթայեան, Ե., ՀՀ ԳԱԱ, 2000, էջ 18:

9 ԲՐՈՒՏԵՍՆ, Մ., Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործութիւն, Ե., «Ամրոց Գրուպ», 2014, 165-169:

Պատմական երգերի ճանաչողական արժէքը չափազանց մեծ է եւ դրա վառ օրինակներից մէկը Հայր Ղեւոնդ Ալիշանի հրապարակած Հեթում Ա թագաւորի որդի՝ Լեւոնի մասին երգն է: Հեթումեան տոհմի հիմնադիր՝ Կիլիկեան Հայաստանի Հեթում Ա թագաւոր ժառանգեց հայոց գահը բաւականին բարդ ժամանակաշրջանում: մի կողմից՝ չդաշնակցող ու պարբերաբար դաւաճանող խաչակիրների կոմսութիւններն ու դքսութիւնները, միւս կողմից իսլամադաւան երկրները՝ Ռումի սելջուկեան, Այուբեան (Քյուրեան) եգիպտա-ասորիքեան եւ Իկոնիայի սուլթանութիւնները, իսկ հեռաւոր Արեւելքից՝ թաթար-մոնղոլական սպառնալիքը: Այս առիթով ԺԵ. դարի վենետիկեան պատմիչ Մարինոյ Սանուտուսը (Մանուտոյ) գրել է: «Հայկական թագաւորութիւնը բրգկուում են չորս գագան. առիւծը՝ թաթար-մոնղոլները, որոնց հայոց թագաւոր քարձր հարկեր է մուտօւմ, ընճառիւծը՝ եգիպտական մամլուկները, որոնք թալանում են երկիրն ու ոչչացնում քրիստոնեաներին, գայլը՝ Իկոնիայի թուրք-սէլջուկները, որոնք քայլայում են տնտեսութիւնն ու պետականութիւնը եւ վիշապը՝ միջերկրական ծովահենները, որոնք Հայաստանի քրիստոնեաներին հանգիստ չեն տալիս»<sup>10</sup>: Հեթում Ա.ի դիւանագիտական եւ ուազմավարական տաղանդի չնորհիւ Կիլիկեան Հայաստանն առժամանակ մեծացրեց իր կշիռն ու ամրապնդեց դիրքերը: Միջնադարեան պատմիչները Հեթում Ա.ին տուել են բազում պատուանուններ՝ «Աստուածաւեր», «Բարեպաշտ», «Քրիստոսաւեր», «Մեծն», «Քրիստոսապասկ» եւն: Հեռատես, լայնախոհ, սկզբունքային, քաղաքական մեծ կորովի ու քաջութեան, դիւնագիտական ճկուն մտքի եւ խորամիտ բանականութեան չնորհիւ Կիլիկեան Հայաստանը եւ առհասարակ՝ ողջ քրիստոնեայ Արեւելքը, այդ թւում նաեւ երուսաղէմը, նրա գահակալութեան ժամանակահատուածում փրկուեցին իսլամական յարձակումներից<sup>11</sup>:

Հեթում Ա.ի առաջնային քաղաքական նպատակն էր՝ չզոքացնել իսլամական գործօնը տարածաշրջանում: Թաթար-մոնղուների ներխուժման սպառնալիքը կանխելու համար, ծանրա-

10 МИКАЕЛЯН Г., История Киликийского Армянского Государства, Е., 1952, 451 (M. Sanutus, Liber secretorum fidelium crucis, Hanoviae, 1611, 32):

11 Հեթում Ա.ի կերպարն իր «Խմասութեան բանալի» վեպում հրաշակի կերտել է լին արձակագիր Յան Դոբրաչինսկի (JAN DOBRACZYNSKI, Klucz madrosci, 1951, Warszawa), Կիլիկեան Հայաստանի արքային ներկայացնելով որպէս համեարեն դիւնագէտ եւ հեռատես քաղաքական գործիչ, ում դաւանանացին եւրոպացի միապետները եւ իսլամադաւան թշնամիների դէմ միայնակ քողեցին:

գոյն ճամփորդութիւն նախաձեռնելով, Հեթումն անձամբ մեկնեց մոնղոլական մայրաքաղաք Կարակորում եւ 1253ին Մանգու (Մունկէ)<sup>12</sup> խանի հետ խաղաղութեան եւ փոխօգնութեան դաշնագիր ստորագրեց: Հեթում թագաւոր Մանգու խանին ներկայացրեց մի քանի յօդուածից բաղկացած պայմանագիր, որի կետերի համաձայն խանը պէտք է մկրտուէր, հոգեւորականութիւնն ազատէր հարկերից, Երուսաղէմը վերադարձնէր քրիստոնեաներին, վերջ դնէր Պաղտատի խալիֆի իշխանութեանը, հայերին վերադարձնէր մուսուլմանների կողմից բռնագրաւուած հողերը եւ այլն<sup>13</sup>: Մոնղոլների զինակցութեամբ Հեթում թագաւորին յաջողուեց որոշ ժամանակ սանձել Հալէպի ամիրայութեան եւ եղիպտոսի սուլթանութիւնների ոտնձգութիւնները: Հայ-թաթարական միացեալ բանակը արշաւեց Ասորիք, գրաւեց հայոց Եղեսիան (Էղեսսա, Ուռհա) եւ Հալէպը, հասաւ մինչեւ Երուսաղէմ, որտեղ եւ Հեթում Ա.ն անցկացրեց Սուրբ Զատկի տօնը<sup>14</sup>: Մի շարք յաղթանակներով Հեթումին յաջողուեց ամրապնդել Հայոց պետութեան միջազգային հեղինակութիւնը:

Հեթում Ա. թագաւորն ու նրա կինը՝ Ռուբինեանների տոհմից Զարէլ թագուհին ունեցել են ինը զաւակ՝ չորս որդի (Լեւոն, Թորոս, Ռուբէն, Վասակ) եւ հինգ դուստր (Ֆիմի, Մարիա, Սիրիլ, Ռիտա, Իզաբէլ): Հեթումի որդիների ճակատագիրը ծանր է դասաւորուել պատմութեանը յայտնի տուեալներով Վասակը մահացել է մանուկ հասակում՝ չորս տարեկանում<sup>15</sup>, արքայորդի Թորոսը<sup>16</sup> 1266ին գոհուել է Մեւ լեռների մօտ եղիպտա-

12 Մանգու խանը (1208-1259 թ.թ.) Զինգիզ-խանի բռուն էր, Մոնղոլական կայսրութեան չորրորդ Մեծ տիրակալը, որի օրով թաքար-մոնղոլական զօրքը սաստիկ թնձեց խամական ուժերին եւ հասաւ մինչև Աղրիատիկայի ափերը: Նրա մահից յետոյ Մոնղոլական կայսրութիւնում պառակտումներ սկսուեցին, որ բացասական ազդեցութիւն ունեցաւ նաև Հայոց Կիլիկիայի յետագայ պատմական իրադարձութիւնների զարգացման գործընթացում:

13 ԳԱԼСΤЯՆ Ա., *Армянские источники о монголах: извлечения из рукописей XII-XIV вв.*, Изд-во Восточной литературы АН АССР, 67-70.

14 ԱԼԻՇԱՆ Դ., *Սիուան Համազրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ*, Վենետիկ, Ս. Ղազար, 1885, 144-338:

15 Ոլոշ աղքիկների համաձայն՝ մանուկ հասակում մահացած Հեթումի կրտսեր որդին Ռուբէնն էր (Ռովլէն) (տե՛ս Ա.Ճ.Ա.ՌԵՍՆ, Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. 4, Ե., Համալսարանի հրատ., 1948, 329):

16 Թորոսի որդի Մելքոննը պապի՝ Հեթում թագաւորի յորդորով բռնելով արքունիքը, զօրախմբով տեղափոխուել է պապերի երկիր՝ Աքբար: Մելքոնն այն «թագաւորազմ իշխանն է», որ ներսէս Շնորհալու մասունքներն ու մեռնենի շիշը յանձնել է Խարբերդի Խուլէ վանիի առաջնորդ Միքայէլ

կան գօրքերի դէմ տեղի ունեցած ճակատամարտում, իսկ աւագ որդին՝ Լեռնար, ընկել է գեղի:

Հեթումի առաջնեկ եւ ապագայ Կիլիկիոյ թագաւոր Լեւոն Գը ծնուել է 1236ի Յունուարի 24ին։ Լեւոնը բազմակողմանի զարգացած մարզիկ էր. իր քաջութեան եւ ճարպկութեան համար քսանամեայ արքայազնին չնորհուեց «ձիաւոր ասպետի» կոչում եւ հոչակուեց գահակից։ 1262ին Լեւոնն ամուսնացաւ Լամբրոնի տիրոջ դուստր՝ գեղեցկուհի Աննայի հետ, որն աւելի յայտնի է Կեռան անուամբ<sup>17</sup>, եւ այդ խնամութեամբ Լամբրոնը միացաւ Հայոց թագաւորութեանը։ 1266ի պատմական իրադարձութիւնները շրջադարձային եղան։ Եգիպտոսի սուլթան Զահեր Բայրասը պահանջեց Հեթումից հրաժարուել նախկինում Հայէպին պատկանած սահմանամերձ վայրերից, որոնք մոնղոլները նուիրել էին իրենց գաշնակից հայերին, ինչպէս նաեւ խգել հայ-մոնղոլական դաշնքը՝ ընդունելով մամլուքեան Եգիպտոսի գերիշխանութիւնը։ Մերժելով Բայրասին՝ Հեթում Ա.ն քաջ գիտակցում էր, թէ ինչ նոր աղէտ էր սպասում Կիլիկեան Հայաստանին, ուստի բանակը յանձնելով հարազատ եղբօրը՝ Սմբատ Սպարապետին<sup>18</sup> եւ որդիներին՝ Լեւոնին ու Թորոսին, ինքը շտապ մեկնեց Տրապիզոն, մոնղոլների Հուլաւու խանի որդուց՝ Աբաղայից օգնութիւն բերելու։ 1266ի Օգոստոսի 24ին, Սեւ լեռների շրջանում Մատի կոչուող կիրճում, մամլուքների 30 հազարանոց բանակը բախուեց 154զափարանոց հայոց բանակի հետ, որն էլ պատմութեան մէջ մնաց որպէս Մատիի ճակատամարտ։ Հայկական

արքեպիսկոպոսին, նա էլ իր հերթին այն բաղկա է Սուրբ Գևորգ վանքում՝ (տե՛ս ԱԼԻՇԱՆ, Հ. Դ., Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, Ս. Ղազար, 1873, 455):

<sup>17</sup> 1879, 155). 17  
Պալտականներն ու ժողովուրդը հայոց թագուհուն կոչել են Կեռ-Ուննա (Կոնսարէն՝ «kir» տիրուհի), որն էլ ժամանակի ընթացքում դարձել է Կեռ-Ուննա (տե՛ս ԱՃԱՌԵՑՆ, Հ., Հայոց անհանունների բառարան, հ. 2, Ե., Պետհամասարան, 1944, 616):

18 Սմբատ Սպարապետը, նոյն իմբք՝ Սմբատ Գունստարլը (1208-1276) Տերության պագաւորի աւագ ներպյաց էր: Պատմիչ, իրաւագիտ, բանաստեղծ Սմբատ Գունստարլը Կիլիկեան Հայաստանի փառարանուած զօրավարներից մէկն էր, որ եղրօք քաջադրուելուց յևսոյ ստանձնեց սպարապետի պաշտօնեց վարելով այն կես դար շարունակ: Սմբատ Գունստարլը, ինեւով փայլուեց օրենսդիր, 1265ին կազմեց իր յայտնի Դատաստանագիրք՝ Կիլիկիայի հայության կալան պետութեան հասարակական յարաքրութիւնները կարգադրող հայ իրաւութիւն յուշարձանը (տե՛ս Ա. Լի՛նն, Հ. Դ., Միտուան, Վենետիկ, Ա. Ղազար, 1885, 73):

զօրքերին չաղողուեց դիմադրել իրենց կրկնակի չափով գերազանցող մամլուքներին. թշնամին աւերեց եւ թալանեց երեք խոշոր քաղաքներ՝ Մամեստիան (Մասիս), Աղանան եւ Տարսոնը: Քսան օր պաշարելուց յետոյ ընկաւ նաեւ Սիս մայրաքաղաքը, գերեվարուեց 40 հազար բնակիչ: Պատերազմում հերոսի մահով ընկաւ Հեթումի որդի Թորոսը. նրա մահն այնքան աղէտալի էր, որ վշտացրեց անգամ սուլթանին<sup>19</sup>. «յոյժ տրտմեցաւ, բարկացաւ սպանողացն, եւ սպանողին ասացին, թէ մենք ոչ գիտացաք թէ որդի թագաւորի է. զի զրագումս սպան ի մեզանէ, եւ զրագումս խոցեաց. ապա յետոյ մենք ջան ի վերայ եղեալ սպանաք զնա»<sup>20</sup>: Զարմանալի է, բայց Թորոս արքայորդու մարտում հերոսաքար զոհուած լինելու ողբերգական իրադարձութիւնը բանաւոր արուեստում արձագանք չգտաւ. (յամենայն դէպս, մեր ձեռքի տակ եղած Լեւոնի մասին երգերի ոչ մի օրինակում այդ մասին յիշատակում չկայ): Բացառութեան կարգով կարելի է նշել «Օրինեալ յանուն ահեղ մեծին» («Աւրինեալ յանուն ահեղ մեծին անմէկու մեծ թագաւորին՝ հայրապետն որ գրէին առչեւ Լեփոն Թագաւորին՝ ի Հայոց...») անվերնագիր մի յիշատակագրութիւն՝ «Գովկ ի Լեւոն արքայ եւ ի քանի Թորոս», որտեղ բացի Լեւոնից յիշատակուած է նաեւ Հեթում Ա.ի որդի Թորոսը<sup>21</sup>:

Լեւոն արքայազնին եւ նրա հօրեղբօր՝ Սմբատ Սպարապետի որդուն՝ Վասիլ Թաթարին<sup>22</sup> մամլուքները գերեվարեցին Եղիպտոս, որտեղ նրանք անազատութեան մէջ մնացին շուրջ երկու տարի: Այս պատմական ԺԴ. դարի ֆրանսիացի ժամանակագիր, պատմաբան եւ հոգեւորական Յովհաննէս Դարդելի (Jean Dardele) մի ուշագրաւ տեղեկութեան համաձայն, Եղիպտոսի սուլթան Բէյրարս Ա. Ալ-Բունդուկտարի (Ճեռագրում յիշատակուած է Ֆըն-

19 Ինչպէս յայտնի է պատմութիւնից, ազնուազարմիկ իշխաններին եւ արքայորդիներին ճգնաւում էին ոչ թէ սպանել, այլ գերի վերցնել յետագայ բանկցուիքիւններն աւելի արդիւնաւու դարձնելու նպատակով:

20 Տ.Ծ.Ե.Ա. Հ. Յ., Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Միհրաբնեանց ի Վիեննա, Վիեննա 1895, 333:

21 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Միհրաբնեանց ի Վենետիկ, հատ. Բ, 1924, Ս. Ղազար Վ. Ենետիկի, (Թուղթ 250 ա), 918:

22 Վասիլ (Վասակ) Թաթարը Սմբատ Գունդստարի որդին էր թաքար կնոշից. սպարապետին այդ կնոշը նուիրել էր թաքարաց խանը Սմբատի Թաթարստան գնացած ժամանակ: Վասիլ Թաթարը գերութիւնից ազատուեց Լեւոնի հետ միասին 1268-ին, երկու տարի անց մահացաւ (տե՛ս Ա.Լ-Ծ.Ն. Դ., Արտուր, 72):

դուխտար) սիրելի ստրուկ Սունդուր Ասկարը, թաթար-մոնղոլ-ների խանի մօտ գերութեան էր. նրան գերութիւնից ազատում է Ալինախ անունով մի քաջազուն, սուլթանի ստրուկին բերում ե-դիպտոս եւ փոխանակում Լեւոնի հետ: Հեթումի որդի Լեւոնի ազատման մասին Սուլթանի հրամանը մնաց գաղտնի: Գիշերով, բերդի բանտախցից Լեւոնին պարանով ցած կախելով յանձնեցին մի արաբ ուղտապահնի, որն էլ 8 օրից նրան հասցրեց Կիլիկիա<sup>23</sup>: Հնարաւոր է, որ նման պատմական միջադէպ եւ տեղի է ունեցել, սակայն իրականում, Լեւոնի ազատումը ծանր երկամեայ բանակցութիւնների արդիւնք էր, որի համաձայն Հեթում Ա-ն մամլուքներին զիջեց սահմանային հաղորդակցութեան կարեւոր ուղիներ՝ Դարպասակ, Կապան եւ Պեհեսնի (Բեսնի) քաղաքները, որոնք Կիլիկեան Հայաստանը մի կողմից կապում էին Անտիոքի, իսկ միւս կողմից՝ մոնղոլական Պարսկաստանի հետ<sup>24</sup>: Միանգամայն հասկանալի է, թէ ինչ ազդեցութիւն է ունեցել ժողովրդի վրայ միակ թագաժառանգի երկամեայ գերութիւնը: Պատմական այդ աղէտալի իրադարձութիւնը չէր կարող հասարակ մարդկանց սրտերում արձագանք չունենալ եւ ժողովրդի հարուստ բանաւոր աւանդոյթում արտացոլում չգտնել: Լեւոնի գերութեան վրայ ժողովուրդը հիւսել է տաղեր, որից մէկն է Ս. Ղազարում պահուղ մատենագիր մատենանից քաղել է Հայր Ղեւոնդ Ալիշանը եւ զետեղել իր «Հայոց երգ ուամկականք» ժողովածուում:

### Ի ԼԵՒՈՆ ՈՐԴԻ ՀԵԹՄՈՅ Ա.

Աւաղ ըգԼեռնն ասեմ  
Որ տանկաց դուռն ընկել գերի:  
Իմ լուս, իմ լուս, ու սուրբ Կոյս.  
Սուրբ Խաչն օգնական Լեռնիս ու ամենուս:  
Սուլդանն ի մօյտան ելել  
Իր ոսկի գունտն կու խաղայ:  
Իմ լուս, իմ լուս, ու սուրբ Կոյս.  
Սուրբ Խաչն օգնական Լեռնիս ու ամենուս:  
Խաղաց ի Լեռնն երես.

23 ԴԱՐԴԵԼ ՅՈՎՃԱՆՆԵՍ, Ժամանակագրութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ,  
1891, 16-23:

24 ՄԻՔԱՅԵԼ ԵԱՆ Գ., Կիլիկիայի հայկական պետութեան պատմութիւն, Ե.,  
ԵՊՀ հրատ., 2007:

«Ա՛ն, խաղա՛ ու տուր տատայիդ»:  
 Իմ լուս, իմ լուս, ու սուրբ Կոյս.  
 Սուրբ Խաչն օգնական Լէռնիս ու ամենուս:  
 «Լէ՛ռն, դու տաճիկ լինիս,  
 Ես ու իմ տատաս քէ գերի»:  
 Իմ լուս, իմ լուս, ու սուրբ Կոյս.  
 Սուրբ Խաչն օգնական Լէռնիս ու ամենուս:  
 Լէռնն ի բերդին նստել  
 Դաստոակն աջից ու կուլար.  
 «Քերվան, որ ի Սիս կերթաս,  
 Դուն խապար տանիս պապայիս»:  
 Ոնց որ պապան ալ զանց լսեց  
 Շատ հեծել քաշեց երամով.  
 Եկաւ ի սուլդանն էլաւ,  
 Շակ գետեր եհան արընեց:  
 Էտո գիր Լեւոն որդին  
 Ու հասաւ սրտին մուրատին:  
 Իմ լուս, իմ լուս, ու սուրբ Կոյս.  
 Սուրբ Խաչն օգնական Լէռնիս ու ամենուս:<sup>25</sup>

**Ալիշանի լոյս ընծայած Լեւոնի մասին այս երգը յետագա-  
 յում շարունակաբար ընդգրկուեց յայտնի երգարաններում<sup>26</sup>: Տա-  
 րիներ անց, Տրդատ եպիսկոպոս Պալեանը «Հայ աշուղթներ» ժողո-  
 վածուի առաջին պրակում հրատարակեց Լեւոնի մասին երգի  
 մէկ այլ տարրերակ, որ Հայր Ղ. Ալիշանի օրինակի համեմատ՝  
 խիստ կարծ էր<sup>27</sup>: Տ. Պալեանի հրապարակած այդ երգը բաղկա-  
 ցած է ընդամէնը երկու տնից, որտեղ բացակայում են կրկնակ-  
 ները: Ասատուր Մնացականեանն այս առիթով գրում է. «Իա  
 հիմք է տալիս պնդելու, որ երգի մէջ պահպանուած կրկնակը ներ-  
 մուծուած է յետագայում եւ կապ չունի բուն երգի հետ»<sup>28</sup>: Անուա-  
 նի բանասէրի այդ կարծիքը վիճելի է, քանզի Տ. Պալեանի օրի-  
 նակում կրկնակ-երկտողի բացակայութիւնը պարզապէս վկայում**

25 ԱԼԻՇԱՆ, Հ. Ղ., Հայոց երգք ու ամիկանիք, Վենեսիլի, Ս. Ղազար 1852, 5-6:

26 ԳԱՄՄԱՌ-ՔԱԹԻՊԱ, Ազգային երգարան, Ս. Պետերբուրգ 1856, 35-36: Քը-  
 նար հայկական, խմբ.՝ Մ. Միանարեանց, Ս. Պետերբուրգ 1868, 130-131:

27 ՊԱԼԵԱՆ, Տ. ԵՊԱ. Հայ աշուղթներ, ժողովրդական հայ երգիչներ, տաղա-  
 սացք, հ. Ա., Զմիւռնիա 1911, 16:

28 ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, Ա., Հայկական միջնադարեան ժողովրդական երգեր,  
 Ե., ՀԱՍՀ ԳԱ, 1956, 543:

է տուեալ օրինակի թերի լինելու եւ ոչ հնաբոյք լինելու մասին: Յայտնի է, որ ժողովրդական երգերի եւ խաղիկների առաւել կայուն մասը կազմում են հէնց կրկնակները, կամ ինչպէս ասում են՝ Հիմնատող-կրկնակները, որոնք ժողովրդական երգասատեղծութեան մէջ ձեւակառուցողական կարեւորագոյն նշանակութիւն ունեն: Դրա վառ օրինակ կարող է հանդիսանալ վիպա-քնարական «կարոս խաչ»-ը, որի առաջին պատումները հանդիպում են Ա. Սեղրակեանի<sup>29</sup>, Գ. Շերենցի<sup>30</sup>, Գ. Յովսէփեանի<sup>31</sup>, Մ. Աբեղեանի<sup>32</sup> կազմած ժողովածուներում, իսկ երգային տարրերակները Կոմիտասի<sup>33</sup>, Մ. Մելիքեանի<sup>34</sup>, Ա. Քոչարեանի<sup>35</sup> եւ Ա. Փահէւանեանի<sup>36</sup> ձայնագրութիւններում: Մէկ դարից աւել՝ ԺԹ. դարից 70ականներից մինչեւ ի. դարի 90ականները, բանահաւաքները դրառել են «կարոս խաչ» «կրօնա-առասպեկալական ձեւաւորում ստացած»<sup>37</sup> վիպական այդ նշանաւոր երգի շուրջ 20 պատում եւ դրեթէ բոլոր օրինակներում առկայ է «Ծառայ կեղնիմ կարոս խաչին» հիմնատող-կրկնակը: Նոյնը կարելի է ասել պատմա-դիւցազնական «Մոլաց Միրզայի տարրերակների<sup>38</sup> մասին, որի ամէն

29 ՍԵՂՐԱԿԵԱՆ, Ա., Քնար մշեցւոց եւ վանեցւոց, Էջմիածին 1874, 9-12:

30 ՇԵՐԵՆՑ Գ., Վաճայ սազ, մաս Ա., Թիֆլիս 1885, 73-74:

31 ՅՈՎՍԵՓԵԱՆ, Գ. Վրդ., Փշրամքներ ժողովրդական բանահիւսութիւնից, Թիֆլիս 1892, 12-16:

32 Տե՛ս Հազար ու մի խաղ. ժողովրդական երգարան, հ. 2, Խմբագրեցին Կոմիտաս վարդապետ եւ Մանուկ Արեղեան, Վաղարշապատ, Տպարան Մայր Աքոռոյ Ս. Էջմիածնի 1905, Ն 50, 87-97:

33 ԿՈՄԻՏԱՆ, Երկերի ժողովածու (այսուհետ՝ ԵԺ), հ. 10, Խմբ.՝ Ռ. Աբայեան, ՀՀ ԳԱԱ, Ն 95, 82-83:

34 ՄԵԼԻՔԵԱՆ ՍՊ., Հայ ժողովրդական երգեր ու պարեր, Խմբ.՝ Մ. Աղայեան, հ. 1, Ե., ՀԱՍՀ ԳԱ, 1949, Ն 208, 208:

35 ՔՊՉՐԵԱՆ Ա.«, Հայ վիպական երգեր // Հայ աւանդական երաժշտութիւն (Մատենաշար), Պրակ VII, Ե., ՀՀ ԳԱԱ, «Ամրոց Գրուպ», 2010, ԱՆ 35, 36, 37, էջ 105-116:

36 ՓՍՀԼԵՒԱՆԵԱՆ Ա., «Կարոս խաչ» վիպական ասիք Առրայայտ պատում-Աերը, Ե., «Ամրոց Գրուպ», 2004, 71 էջ:

37 Զեւակերպումը Ռոբերտ Աբայեանին է (տե՛ս ԿՈՄԻՏԱՆ, ԵԺ, հ. 10, 180):

38 Տե՛ս ՅՈՎՍԵՓԵԱՆ, Գ., Փշրամքներ ժողովրդական բանահիւսութիւնից, Թիֆլիս 1892, 19-20:

ՀԱՅԿՈՒՆԻ, Ա., ժողովրդական երգ, առած, ասած (էմինեան ազգագրական ժողովածու, հ. 6, Մուկուս-Վաղարշապատ 1904, 40-41):

ԱՃԵՄԵԱՆ, Հ., Մաղկաբայ Վասպուրականի հայ ժողովրդական բանահիւսութիւնից, Էջմիածնի 1917:

**առունն աւարտւում** է «Հազար՝ ափսոս Մոկաց Միքրէն», կամ «Բեմուրադ կեներ Կոլոս Փաշեն» տողով, որն էլ հիմնատող-կրկնակի գերակատարում ունի: «Կարսո խաչ»ի եւ «Մոկաց Միքրօայ»ի հետ մեր զուգահեռները պատահական չեն, քանզի Լեւոն թագաւորի մասին երգն այդ նոյն ժամանակին տեսակաւորման մէջ է՝ պատմա-վիպա-քնարական շարքում, որտեղ առկայ է նաև վշտի դըրսեւորմը: Ինչպէս կարելի է նկատել, Հայր Ալիշանի գրառած «Ի Լեւոն որդի Հեթմոյ Ա.» երգը նմանատիպ սկզբունքով է կառուցւում, որտեղ իւրաքանչիւր տուն աւարտւում է նշուած հիմնատող-երկտողով:

Լեւոն թագաւորին նուիրուած մէկ այլ ուշագրաւ օրինակ, որտեղ առկայ է հիմնատող-կրկնակը, հրապարակեց ինքը՝ Աս-Մնացականեանը: Սկզբնաղբիւր է հանդիսացել Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագիր երգարանը, կազմած Խաչդռուգի<sup>39</sup> ձեռքով (Զեռագիր N 7709, թերթ՝ 93թ-94այ, 1608), որտեղ խիստ վնասուած վիճակում մեզ է հասել «Աւա՛խ, ըզլենն ասեմ» երգի եղած օրինակներից առաւել ամբողջական տարբերակը<sup>40</sup>: Ի տարբերութիւն Ղ. Ալիշանի օրինակի, որտեղ կրկընուող հիմնատողը երկտող է՝

«Իմ լուս, իմ լուս, ու սուրբ Կոյս.

Սուրբ Խաչն օգնական Լէոնիս ու ամենուս»:

**Ապա Ա. Մնացականեանի հրապարակած տարբերակում իւրաքանչիւր տուն աւարտւում** է եռատող-կրկնակով.

«Իմ լոյս, ու սուրբ Կոյս,

Սուրբ Խաչն օգնական կենայ

Լէոնիս, ամէ՛ն, տէր Յիսուս»:

**Հազար ու մի խաղ. Ժողովրդական երգարան, հ. 1, Խմբ.՝ Կոմիտաս Վարդապետ եւ Մ. Աքեղեան, Վաղարշապատ 1904, N 50, 62-66:**

**ԿՈՄԻՏԱՍ.Ս. Եֆ., հ. 10, NN 118-119, էջ 92-93:**

- 39 Խաչատուր երեց Կաֆայեցի՝ աշխարհական անունը Խաչգոռուզ, ծնւ. Կաֆայում (Նրիմ) 1592-ին: Կաֆան հայ գրչութեան կարեւոր օշախներից մէկն է եղել, որն աչքի է ընկել իր տաղերգուներով: Խաչատուր Կաֆայեցու կազմած այդ տաղարանը (Զեռագիր N 7709) բաղկացած է 245 ձեռագիր եշերից, որտեղ տեղ են գտել միջնադարեան խիստ արծեմանոր երգեր (տե՛ս ԱԲՐԱՀԱՄԵԱՆ, Ա., Խաչատուր երեց Կաֆայեցու տարեգրութիւնը, «Եցմիածին», 1944, N 1, 39-51):
- 40 ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, Ա., Հայկական միջնադարեան ժողովրդական երգեր, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1956, 228-230:

Լեւոնի մասին երգը յօրինուել է հէնց նրա գերութեան ժամանակահատուածում եւ ոչ դրանից յետոյ, քանզի տեքստում առկայ է արքայազնի կարգավիճակի անորոշութիւնը, որտեղ հօր՝ Հեթում թագաւորի միակ յոյսը Սուրբ Խաչին ապաւինելն ու աղօթքն է: 1608ի Զեռագիր մատեանում գետեղուած եւ Ա.Մնացականեանի կողմից հրատարակուած Լեւոն թագաւորի մասին երգը ուշագրաւ օրինակ է, որն ուսումնասիրելիս կարելի է զուգահեռներ անցկացնել վերը նշուած Ալիշանի օրինակի հետ, ապա համեմատական վերլուծութեան սկզբունքով մատնանշել այն տիպաբանական առանձնայատկութիւններն ու օրինաչափութիւնները, որոնք առկայ են երկու երգային օրինակում: Ինչպէս Հ. Ղ. Ալիշանի, այնպէս էլ Ա. Մնացականեանի հրապարակած տարբերակներում հետաքրքրական են «Սուլթան ի մետան ելեր, իր ոսկէ գունտն կը խաղայ» տողերը, որտեղ յիշատակուում է ոսկի գունդ խաղալիք-մրցանակները: Այդ նոյն տաղարանում (Զեռագիր N 7709, թերթ 94ա-94բ) մէկ այլ ուշագրաւ երգ է գետեղուած, որտեղ հանդիպում ենք նմանատիպ տողերի:

Թէ սուլթան ի մօտան,  
Թէ սուլթան ի մօտան այլ ելեր,  
Իմ պարոն Ակնարկիոն,  
Գունդիրն կու խաղայ:<sup>41</sup>

Այդպիսի մետաղեայ խնձոր-խաղալիքների, կամ՝ ոսկեգնդերի մրցութիւններ նկարագրուած են «Սասնայ Ծոեր» էպոսում: Գնդախաղերի պատկերազարդումներ կարելի է տեսնել հայկական մատենագիր մատեանների խորաններում<sup>42</sup>, ինչպէս նաեւ եգիպտական հին քանդակապատկերներում, որտեղ նկատելի է գնդախաղի ծիսական հանդէսային բնոյթը<sup>43</sup>: Երգում պահպանուել են ուշագրաւ մանրամասնութիւններ, որոնք կարող ենք բնորոշուել որպէս «կայուն միջադէպեր». Երեք օրինակներում առկայ է բերդի վրայ Լեւոնի նստելու տեսարանը եւ աչքերի արտասուքը թաշկինակով սրբելը.

Լեռնն ի բերդին նստել  
Դաստառակն աջից ու կուլար:

41 ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, Ա., Հայկական զարդարուեստ, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1955, 500:

42 Մ. Մաշտոցի ան. Մատենադարան, Զեռագիր N 4827, թերթ 81ա:

43 ОППЕЛЬ КАРЛ, Чудеса древней страны пирамид, С.Петербург 1897, 179-180.

Տեքստերում պահպանուած թաշկինակի դաստառակ՝<sup>44</sup> ձեւը մեզ յուշում է միջնադարեան Հայաստանում տարածուած բառամթերքի մասին, ինչպէս նաեւ Յիսուսի դէմքով հոչակաւոր Անձեռակերտ Դաստառակի, որ քրիստոնեայ աշխարհի գլխաւոր սրբութիւններից մէկն է<sup>45</sup>: Լեւոնի մասին երգերի տեքստերում կայուն միջադէպ է նաեւ սուլթանի առաջարկը, որ դաւանանքը փոխելու դէպքում նա Լեւոնին կը դարձնի թագաւոր.

-Լէոն, դու տանիկ լինես,  
Զինգ անեմ տանկաց թագաւոր:

Լեւոնի մասին երգերը հասել են մեզ ձեռագիր աղբիւրներից եւ դասում են հայրէնների շարքին, որ շատ սիրուած եւ տարածուած է եղել Կիլիկեան Հայաստանի միջնադարեան գուստանական քաղաքային արուեստում: Ձեւի, ոճի եւ բովանդակութեան առումներով Կիլիկիայի երաժշտական մշակոյթն առաւել մօտ է ժողովրդական վիպա-քնարական երգարուեստին<sup>46</sup>: Գուսանական եւ քաղաքային-ժողովրդական հարուստ երաժշտական մշակութային աւանդոյթների, ինչպէս նաեւ երաժշտական գործիքների տեսակների մասին յիշատակումներ կատարել են հայ միջնադարի երեւելի այլերը՝ Անանուն Արծրունին, Ներսէս Շնորհալին, Յովհաննէս Երզնկացին (Պլուղը), Յակոբ Ղրիմեցին, Թովմա Մեծոփեցին, Առաքել Սիւնեցին եւ այլք<sup>47</sup>: Ինչպէս կենտրոնական Հայաստանում, այնպէս էլ Կիլիկիայում, գուսանները հաւասարապէս ծառայում էին թագաւորներին, իշխաններին, վաճառականներին, արհեստաւորներին. Նրանց քաջ ծանօթ էր հասարակութեան բոլոր խաւերի կենցաղը, ճաշակը, ձգտումներն ու ցանկութիւնները, ուստի եւ երաժշտական նախասիրութիւններին

44 Դաստառակ՝ փոխառնուած է հին պարսկերէնից, մի քանի իմաստ ունի՝ «անձեռոց, ձեռքի սրբիչ, վարշամակ, մաքուր կտա» (տե՛ս ԱՃԱՐԵԱՆ, Հ., Հայերէն արմատական բառարան, Ել հրատ., 1971, 627):

45 Հայոց Արքաքը թագաւորին ուղղուած նամակում Տիրոց Որդին դաստառակի վրայ թողել էր իր դիմանկարը, եւ այդ սրբապատկերը մէկ հազարամետ շարունակ պահուել է Հայոց Եղեսիայում (տե՛ս ՄՈՎԱԷՍ ԽՈՅԵՆԱՅԻ, Պատմութիւն Հայոց, Գիրք Բ., գլ. Ժ., Իմ., ԼԱ., Լ.Գ.):

46 ՏԱԳՄԻՅԱՆ Հ., Մշակա և Արմանական կամաց արմատական բառարան, Երևան, 1996, 20.

47 ԹԱՀԱՅԻՉԵԱՆ Ն., Քննական տեսութիւն հայոց հիմն միջնադարեան երաժշտութեան պատմութեան, // «Լրաքեր Հասարակական Գիտութիւնների», Ե. 1971, N 5, 29-44:

համապատասխան՝ յօրինւում եւ կատարւում էին սիրային, պատմական, ծիսական, վիպական եւ այլ տեսակի երգեր: ԺԲ. դ. հայ ժամանակագիր Մատթէոս Ուռհայեցին իր յայտնի աշխատութեան մէջ նշում է, որ անգամ զինուորները, ուազմական արուեստից առաւել՝ սիրել են գուսանների նուազն ու երգը: «... ատեցին զարուեստ պատերազմի... սիրեցին զրաբրուտ (քնար - Մ. Տ.) եւ զերգը գուսանաց»<sup>48</sup>: Նոյնը՝ հայ իշխանների եւ հոգեւորականների վերաբերեալ գրում էր նաեւ չեթում Ա. թագաւորի եղբայր՝ Մըրատ Սպարապետը<sup>49</sup>: Կիլիկիայի զարգացած գուսանական արուեստը սերտ առնչութիւններ է ունեցել ինչպէս արեւելեան՝ իրանական, այնպէս էլ հայկական երաժշտական արուեստի հետ. մայր Հայաստանից Կիլիկիա են եկել գուսանական խմբեր եւ ուշագրաւ ծրագրերով հանդէս եկել<sup>50</sup>: Կիլիկեան Հայաստանի գուսանները իսաչակիր-ասպետների միջոցով առնչութիւններ են ունեցել նաեւ ֆրանսիական ժողովրդա-պրոֆեսիոնալ երաժշտական արուեստի՝ մասնաւորապէս Պրովանսի տրուբադուների երգարուեստի հետ<sup>51</sup>: Ցաւօք, այդ հարուստ երաժշտական մշակոյթից մեզ գրեթէ ոչինչ չի հասել՝ հատ ու կենտ օրինակներ, որոնցից մէկն էլ Լեւոն թագաւորի մասին երգն է: Մանուկ Արեղեանը գրում է, որ արդէն Ժ. զարում եղել են յանդաւոր յօրինուած եւ ուիթմիկ չափերով աշխարհիկ երկասող տներով երգեր, որոնք առանձնապէս զարգացրել են ԺԱ.-ԺԲ. դարերում: Այդ երկաող տներով երգերը «քանիցը են ոչ թէ եկեղեցական երգիշները, այլ սիրու երգիշները եւ նոյնիսկ բանաստեղծ լալկան կանայք, այն էլ հակառակ եկեղեցու թշնամական վերաբերմունքի»<sup>52</sup>: Հչնց այդպիսի երկաող տներով է կառուցուած Լեւոնի մասին մեր ճեռքի տակ եղած բոլոր երեք օրինակները, որտեղ նշմարւում է մէկ օրինաչափութիւն՝ 15 վանկանի երկաող հայրէնը, ուր առաջին տողը պարտադիր 7 վանկանի է, իսկ երկրորդը՝

48 ՄՍ.ՏՔ.ՈՍ ՈՒԽՀԱՅԵՑԻ, Ժամանակագրութիւն, Թարգմ., Աերած., եւ ծանօթագր.: Հ. Բարբիկեան, Ե. 1973, «Հայաստան», 53 (Վաղարշապատ 1898): Աօր-ագր.: Հ. Բարբիկեան, Ե. 1973, «Հայաստան», 53 (Վաղարշապատ 1898):

49 ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԾ, Տարեգիրք, Վենետիկ 1956, 33:

50 Այդպիսի երոյթներից մէկին ականատես է եղել ֆրանսիացի հանապարհորդ եւ պատմիչ Ժան Սիր դէ-Ժուանվիլը (անգլ. JEAN DE SIR JOINVILLE, Historique de Saint Louis, Paris 1874, 286-288):

51 Տե՛ս վերը նշ. աշխ.՝ Ֆրիկ. Դիւան, 224:

52 ԱԲԵՂԵԱՆԴ Մ., Հին գուսանական ժողովրդական երգեր, Երկեր, հ. Բ., Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1967, 181:

8 վանկանի: Հայրէնների ներքին բաժանումը հետեւեալն է՝ 7 վանկանի (2+3+2) եւ 8 վանկանի (3+2+3), շեշտադրուող 5րդ, 7րդ, 10րդ եւ 15րդ վանկերով.

Սուլթ-ա՛ն / ի մետա՛ն / ելե՛լ, (7)  
 իր ոսկի՛ / գունտը՛ն / կու խաղա՛յ: (8)  
 -լէռ՛ն, / դու տաճի՛կ / լինե՛ս, (7)  
 ԶՔնեց անե՛մ / տանկա՛ց / թագաւոր՛ք: (8)  
 Խաղա՛ց / ի լէռ՛նն / երե՛տ. (7)  
 «Ա՛ն, խաղա՛ / ու տո՞ւր / տատայի՛դ»: (8)

Այս ոտանաւորի հնագոյն գործածութիւնը կարելի է գըտ-նել Գրիգոր Նարեկացու, իսկ աւելի ուշ՝ Ֆրիկի, Մկրտիչ Նաղա-շի, Գրիգոր Աղթամարցու բանաստեղծութիւններում։ Վկայու-թիւնների համաձայն՝ հինգ այս ոտանաւորի ձեւն են օգտագոր-ծել հին գուսաններն ու ողբասաց կանաքը։ 15 վանկանի հայրէն-ներով են շարադրուած Ակնայ երգերի զգալի մասը, իսկ ձեռա-գիր մատեաններում այս չափով յօրինուած ոտանաւորները կը-րում են «հայրենի կարգ» վերնագիրը<sup>53</sup>,

Զարմանալի է, որ Լեւոն թագաւորի մասին երգերի ներ-կայացուած օրինակներում երկտող հայրէններով շարադրուող բո-վանդակային եւ վանկաչափական այսքան հաստատուն կառու-ցուածքի (7+8) պարագայում անկայուն են հիմնատող-կրկնակնե-րը, եւ սա այն դէպքում, որ հիմնատող-կրկնակները, որպէս կա-նոն, երգի առաւել կայուն մասն են կազմում։

Իմ լուս, իմ լուս, ու սուրբ Կոյս. (7)

Սուրբ Խաչն օգնական Լէռնիս ու ամենուս։ (12)

(Ալիշաբի օրինակ)

Իմ լոյս, ու սուրբ կոյս, (5)

Սուրբ Խաչն օգնական կենայ (7)

Լէռնիս, ամէ՛ն, տէր Յիսուս։ (8)

(Ա. Մանացականեանի օրինակ)

Դժուար է ասել, թէ այդ երեւոյթն ինչի հետեւանք է. պատճառներից մէկը կարող էր հանդիսանալ մեղեդու աղաւա-դումը, որի արդիւնքում վանկերի քանակը հնարաւոր էր աւելա-նար կամ պակասէր, յարմարեցուելով փոփոխուած մեղեդուն։ Ցա-

53 ԱԲԵՂԵՍՆ, Մ., Հայոց լեզուի տաղաչափութիւն, Երկեր, հ. Ե., Երեւան, ՀՍՍՀ ԳԱ, 1971, 226-229:

ւոք, մենք ոչ մի պատկերացում չունենք այս երգի մեղեդու մասին եւ միայն երջանիկ պատահականութեամբ է հնարաւոր, որ օրերից մի օր այն յայտնուի<sup>54</sup>: Անուանի բանագիտ Ալվարդ Ղազիյեանն իր «Հայ ժողովրդական ուազմի եւ զինուորի երգեր» ուսումնասիրութեան մէջ յիշատակում է չէրքէզահայերից գրի առած մի ժողովրդական երգ<sup>55</sup>, որ չէրքէզերէնից թարգմանուել է գերմաներէն, պահպանելով երգի հայերէն վերնագիրը՝ «Leon takaor»<sup>56</sup>: Անհրաժեշտ է նշել, որ Լեւոն թագաւորի երգի ոռուսերէն թարգմանութիւնը, մանրամասն ծանօթագրութեամբ, իր յայտնի աշխատութիւնում ընդգրկեց նաեւ Վալերի Բրիւսովը<sup>57</sup>:

Լեւոնի գերութեան եւ նրա կնոջ Կեռան-Աննայի մասին, մի ուշագրաւ վկայութիւն է պահպանուած Զեռագիր N 4965, որ ընդօրինակուած է Կիլիկիայում Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսի պատուէրով կատարուած ձեռագրից: Գրչի յիշատակարանում նշուած է: «Ստացողի սորա տեառն Կոստանդեայ դպրապետի հայոց ողորմեսցի տէր Յիսուս եւ ծնօղաց իւրոց, ամէն, եւ գրչիս: Ո՞վ մանկունք նոր սիովնի, յիշեցէք զարքայորդին ըլլեւոն զմատնեալն ի ձեռս անօրինաց, զի շնորհեսցէ զնա մեզ վերըստին, զի որք եւ անտեսուչ ո՞չ մնասցուք, եւ զամուսինն իւր զբարեպաշտ տիկինն զկեռան եւ զդեռարոյս որդեակ իւր զկոստանդին, զոր տէր Յիսուս կարողացուցէ եւ յաղոռոս արացէ ի վերայ թշնամեաց խաչին Քրիստոսի եւ պարագայց ամօֆ շնորհեսցէ ի պարծանս եկեղեցւոյ, զի խաղաղութեամբ վարեսցուք զկեանս մեր...»<sup>58</sup>:

54 Հին երգարաններում հրատարակուել են միայն այդ երգի բանաստեղծական տարրերակները եւ ոչ մեղեդին: Լեւոն արքայի երգի մեղեդու պահպանուած լինելու վերաբերեալ մեր հարցումը Վենետիկեան Միխրաբեանների միարանուրեան արիխիւ դրական պատասխան չունեցաւ: Անկասկած, այդ խիստ արժէքաւոր երգի մեղեդին մեզանից առաջ է որոնողներ եղել են, սակայն ներկայ դրուեամբ Լեւոն թագաւորի մասին երգի մեղեդային որեւէ տարրերակ մեզ յայսնի չէ:

55 АРАКЕЛЯН, Г., Некоторые вопросы истории переселения армян на Северо-западный Кавказ и становление черкезогаев. Кавказ и Византия, выпуск 3, Е., 1982, с. 35-36:

56 ՂԱԶԻԹԵԱՆ, Ա., Հայ ժողովրդական ուազմի եւ զինուորի երգեր, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1989, 270:

57 Поэзия Армении с древнейших времен до наших дней в переводе русских поэтов. Редакция, вступительный очерк и примечания В. Брюсова, Е. 1966, 122.

58 Մ. Մաշտոցի ան. Մատենադարան, Զեռագիր N 4865, թէրք 159թ, ժամանակ ԺԳ. դ., հաւանաբար 1266:

**Հեթում թագաւորի բանակցութիւնների ու տարածքային զիջումների չնորհիւ 1268ին, 22 ամսուայ գերութիւնից յետոյ, Լեւոն արքայորդին վերադարձաւ հայրենի Կիլիկիայի Սիս մայրաքաղաք։ Այդ տարիները ծանր ժամանակաշրջան էր Կիլիկեան Հայաստանի համար։ 1267ի ապրիլին կեանքից հեռացաւ Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսը եւ նոր հայրապետի ընտրութիւնը չուրջ մէկ տարի ձգձուեց։ Միայն 1268ի պայմանագրի կնքումից եւ Լեւոն արքայորդու վերադարձից յետոյ գումարուեց եկեղեցական ժողով եւ հայոց հոգեւոր առաջնորդ ընտրուեց Յակոբ Կայեցին ով եւ կատարեց Լեւոն թագաւորի օծման արարողութիւնը։ Լեւոն արքայի գահակալութեան հանդէսը տեղի ունեցաւ 1269ին, Սսի Սուրբ Սոփիա եկեղեցում<sup>59</sup>։ Ժամանակակից մի յիշատակարան այսպէս է նկարագրել այդ իրադարձութիւնը. «...ի մեծ եկեղեցին Ս. Սոփիի, եւ եղիւ ժողով մեծ յամենայն ազգաց՝ վերադիտողաւ Հայոց Տեառն Յակորայ եւ բազում եպիսկոպոսաւ եւ վարդապետաւ. եւ բազում ի Յունաց Պատրիարքաց եւ յասորուց եւ Թունգաց, եւ յիշխանաց մեծամեծաց ի Հայոց, եւ ի Հռոմոց»<sup>60</sup>։ Արարողակարգին ներկայ երեւելի այրերից մէկը եպիսկոպոս Ստեփանոս Օրբելեանն էր, որ 1268ին ուղեւորուելով Կիլիկիա՝ պէտք է ձեռնադրուէր Սիւնեաց երկու Աթոռների՝ Տաթեւի եւ Ամալու Նորավանքի ընդհանուր մետրապոլիտ<sup>61</sup>։ Երեք ամիս ապրելով արքունիքում եւ արքայական ընտանիքի կողմից մեծ պատիւների արժանանալով՝ Ստեփանոս Օրբելեանը խոր ակնածանք է ունեցել Հեթում Ա. եւ Լեւոն Գ. թագաւորների հանդէպ։ Սուրմ նրա «Երկարաժամկէտ» հիւրընկալութիւնը պայմանաւորուած էր հոգեւոր առաջնորդի ընտրութիւններով<sup>62</sup>։ Յետագյում, պատմելով Լեւոն թագաւորի Տաթեւի վանքին միաբան դառնալու եւ թանկագին ընծաներ ուղարկելու մասին՝ պատմագիրը մէջըերում է 1282ին Լեւոնի գրած մի ոտանաւոր՝ շեշտելով՝ «գրէ իւրով ձեռամբ յիշատակ ինքնան», տասնհինգ վանկանի (7+8) հայրենի չափով։**

59 Սսի սուրբ Սոփիա եկեղեցին 1262ին կառուցել է Լեւոն Գ.-ի հայրը՝ Հեթում թագաւոր։

60 Թորոս Աղքար, մաս Բ., գրեց Գ. Վ. Արուանձտեանց, Կ. Պոլիս 1884, 383։

61 ՍՏԵՓԱՆՆՈՒՍԻ ՍԻՒՆԵՍ. ԵՊԻՍԿՈՊՈՍ, Պատմութիւն Տաճն Սրբական, Իլյոս ընծայեց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 350-351։

62 Ստեփանոս Օրբելեանի օծման արարողութիւնը նոյնպէս կատարել է նորը ընտիր հայրապետ՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Յակոր Կայեցին։

Մարդիկ ոք հոգւոյ աչօֆ  
Յանվախնան կեանըս հայեցան.  
Մինչդեռ ի մարմնի էին,  
Փրկութեան հոգւոյն շանացան.  
Յաղագս որոյ ես, Լեւոն,  
Թագաւոր ազգիս Հայկագեան.  
Յայս աստուածընկալ սուրբ ուխտ  
Խնդրեցի լինել միարան.....<sup>63</sup>

**Գահը որդուն փոխանցելուց յետոյ, նոյն 1269ին Հեթում Ա. հրաժարուելով աշխարհիկ կեանքից, քաշուեց վանք<sup>64</sup>:** Սսից ոչ հեռու, Դրազարկ վանքում<sup>65</sup> Հեթում Ա. թագաւորն ընդունեց Մակար անունը, ճգնեց եւ մէկ տարի անց՝ 1270ի Հոկտեմբերի 28ին հեռացաւ կեանքից<sup>66</sup>: Մակար ճգնաւորի գրչին են պատկանում երկու պարականոն շարական, որոնք մեզ են հասել չնորհիւ Ս. էջմիածնի միաբան՝ Մահակ վրդ. Ամատունու 1880ականներին արուած ձայնագրութիւնների<sup>67</sup>:

- 63 ԱԲԵՂԵՍՆ, Մ., Հիմ գուսանական ժողովրդական երգեր, Երկեր, հ. Բ, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1967, էջ 182:
- 64 ԶԱՄՄՁԵՍՆ, Հ. Մ., Պատմութիւն Հայոց, հատ. Գ., Վեմնտիկ, 1885, Լ.Դ, էջ 269:
- 65 Դրազարկ վանքը յայտնի է Ժ. դարից: Գտնուում է Կիլիկեան Տարոսի լեռների լանջին, անառիկ եւ անմատչելի վայրում, Սսից 36 կմ դեպի արևելութեան: Անուան ծագումը կապում են «քուր» եւ «զարկ» բառերի հետ: Դրազարկը հանդիսացել է Ռուրինեան իշխանների եւ թագաւորների դամբարան, դրա համար էլ դարձել է նրանց հոգածութեան առարկան (տե՛ս ՄԵԼԻՔ-ԲԱՇԽԵՍՆ Ս., Հայոց պաշտամունքային վայրեր, 2008, Ե., ԵՊՀ հրատ., 131):
- 66 Այդ նոյն 1270ին մահացան նաև Սմբատ Գունդստարի երկու որդիները՝ Վասիլ Թաքարը եւ նրա արիւնակից եղբայր Հեթումը, որոնք բաղուացին Միհի վանքում՝ կողք-կողքի (տե՛ս ԱԼԻՇԱՆ, Հ. Ղ., Միտուան, 72): Ենթադրում ենք, որ նրանց մահուան պատճառ կարող էր լինել լընդախտի (ցինգա) համահարակը: Հիւանդութեան մասին առաջին հաւաստի տեղեկութիւնները վերաբերում են Ժ. դարին, որի համապատասխան կիլիկիայում տարածել են խաչակիրները ու նաւաստիները:
- 67 Տե՛ս Հիմ եւ նոր պարականոն կամ անկաւեր շարականներ: Լոյս ընծայեց Սահակ վարդապետ Ամատունի: Միաբան Մայր Արոնից Ս. էջմիածնի: Արդեամբք եւ ծախիւք տեառն Սուլիասայ արքեպիսկոպոսի Պարեանց, Վաղարշապատ 1911, 15, 58:

**Գահակալումից յետոյ Լեւոն Գ.** թագաւորն իր աթոռանիստը Սսից տեղափոխեց Տարսոն: Պատմութեան զարգացումը հետեւեալն էր. եգիպտացի մամլուքները յարձակուելով՝ գրաւեցին եւ այրեցին Տարսոնը: Լեւոն Գ. հասցրեց փախչել, սակայն երկրորդ արշաւանքի ժամանակ հիմնովին ջախճախնեց թշնամուն եւ կոռի դաշտում նետահար սպանուեց սուլթանը: Մի շաբք փայլուն յաղթանակներից յետոյ Լեւոն Գ. թագաւոր խաղաղացաւ եւ հաստատուելով Կիլիկիայում՝ կեանքի մնացեալ մասն անցկացրեց հոգ տանելով երկրում կրթութեան եւ արուեստի տարածմանը, ինչպէս նաեւ Աստուածահանոյ գործեր կատարելով, որին աջակից էր նաեւ Կեռան թագուհին: Իր կեանքի վերջին տարիներին կեռան թագուհին դարձաւ կրօնաւոր եւ ինչպէս իր սկեսրայր Հեթում Ա. թագաւոր, քաշուեց Դրազարկ վանքը, ընդունեց Թեւանա (Թէոֆանիա) հոգեւոր անունը եւ մնացեալ կեանքը նուիրելով Աստծուն՝ հեռացաւ աշխարհից 1285ի Յուլիսի 28ին: Մի յիշատակարանի համաձայն՝ 1285ին, իր բարեպաշտ կող մահից յետոյ, Լեւոն թագաւորն այցելեց Թաղեւոս առաքեալի վանքը, որի առաջնորդն էր Տիրացու եպիսկոպոսը: Ա. Թաղեւոս (Թաղէոս) վանքը, աւելի յայտնի է որպէս Թաղէի վանք՝ Իրանի հայկական նշանաւոր վանական համալիրներից է եւ աւանդութեան համաձայն Դ. դարում այն հիմնադրել է Թաղեւոս առաքեալը<sup>68:</sup>

Պահպանուել է նաեւ մի արձանագրութիւն, համաձայն որի, Երուսաղէմի գլխաւոր հայկական եկեղեցու՝ Ա. Յակոբեանց (Սրբոց Յակովեանց Վանք Հայոց) վանքը պարսպապատուել եւ գաւիթը սալյատակաւորուել է Հայոց Կիլիկիոյ արքայ Լեւոնի եւ Կիլիկիոյ կաթողիկոս Յակոբ Կլայեցու պատուէրով. «Նուաստ Ծառայ ամենայն քրիստոնէից Ծալայ վարդապետս՝ յարեւելից եկաք յաստուածակոյն քաղաքն Երուսաղէմ արդեամբ եւ ընչիւք սուրբ քագաւորին Լեւոնի, եւ Տէր Յակոբ Կաթուղիկոսի: Սրբոց Յակովեանց եկեղեցւոյ գաւիթս սալեցաք, եւ Հրեշտակապետսն վանք պարսպեցաք, որի կարդայք Ա. Թագաւորին եւ իւր գաւակացն Երկար կեանս խնդրեցէ»<sup>69:</sup> Նշանակալիցն այնն է, որ այդ եկեղեցին կառուցել էր

68 ՏՈՒՄԱՆՈՎ Ա., *Արմանքիա древнія рукописи Монастыря св. Фомы* // Сборник материалов для описания местностей и племен Кавказа, Тифлисъ 1901, т. 29, 1-18.

69 Տէր-ՅովէչԱնսէսէնքնէ, Ա. եպս., Ժամանակագրական պատմութիւն Ա. Երուսաղէմի, Խո. Ա., Տպարան Սրբոյ Յոկովեանց, Երուսաղէմ 1890, 189-190:

նրա հայրը՝ Հեթում Ա. թագաւոր, կեանքից անժամանակ հեռացած կնոջ՝ Զարէլի յիշատակին (մահացել է 1252ին). սեւ մարմարէ արձանագրութիւնը հետեւեալն է. «ԱՍ ԵԿԵՂԵՑԻՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈՎՔ ԱՆՈՒՆՈՎ ՀԵԹՄՈՅ ԹԱԳԱԽՈՐԻ ԺԱՄՄԱՆԱԿ ՇԻՆՈՒԵՑԱՌ ԵՐԱՆՈՒՀԻ ՏԻԿՆՈԶ ԶԱՊԷԼԻՆ ՅԵՍՊԱՆԻՕՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԵՆ ՎԵՐՁԸ ՅԱՂԹԱՆԱԿ ԵԼԱԼՈՎ. ԶԶ (1257)»<sup>70</sup>:

Մեզ է հասել Լեւոն թագաւորի պատանեկութեան տարիների մի նկար, 1249ի մի Աւետարանի մէջ, որ գրել էր տուել կոստանդիին Ա. կաթողիկոսը եւ նորիրել տասնհինգամեայ արքայազնին<sup>71</sup>: 1262ին Աւետիս անունով գրչին Լեւոնը պատուիրեց մի Աւետարան, որ ծաղկեց հոչակաւոր թորոս Ռուլինը, որտեղ կայ Լեւոնի նկարը իր նորապսակ կնոջ հետ<sup>72</sup>: Երուսաղէմի Սուրբ Յակոբեանց վանքում պահւում է մագաղաթեայ սոկեկազմ մէկ այլ Աւետարան (Զեռ. N 2563) յայտնի որպէս «Կեռան քագուհու աւետարան», որ 1272ին գրուել եւ պատկերազրուել է Սոսում՝ կեռան թագուհու պատուէրով (գրիչ՝ Աւետիք քահանայ)<sup>73</sup>: Այստեղ պահպանուել է Լեւոն թագաւորի, կեռան թագուհու եւ նրանց հինգ զաւակների<sup>74</sup> մանրանկարը, որ բարձրարուեստ կատարումից բացի ունի նաեւ պատմական նշանակութիւն: Իր նրբագեղութեամբ եւ կատարողական բարձր վարպետութեամբ այդ մանրանկարը հայկական միջնադարեան արուես-

70 Ա.նդ, 187-188:

71 Յետագայում այդ նկարն արտամելարեց ամուանի գեղանկարիչ, ծագումով նախիշեւանցի՝ Համայեակ Արծարպանեանը, որից եւ լուսանկարելով՝ առաջին անգամ տպագրեց Գարեգին Յովսէփիեանը (տե՛ս ՅՈՎ.ՍԵՓԵԱՆ, Գ. վրդ., Մանրանկարչութեան արուեստը Հայոց մէջ (Լեւոն Գ.ի պատկերի առքի), «Լումայ», Թիֆլիս 1902, N 1, 197):

72 Տե՛ս. Շողակար. Հայագիտական ժողովածու, հ. Ա., Ս. էջմիածին, Վաղարշապատ 1912, 201:

73 Երևանացէմի Ս. Յակոբեանց եկեղեցու Մատենադարան, Զեռագիր N 2563/8, Աւետարան սոկեկազմ, Շորայակիրի ժամանակից, նոյն նկարներով եւ լուսանցազրարդերով, մաքուր կարենացոյն մագաղաք, Գրիչ՝ Աւետիք, թերթ 380ա, 37,7 X 24սմ, մէջք 9,2 սմ, 382 թերթ (տե՛ս ՅՈՎ.ՍԵՓԵԱՆ, Գ. վրդ., Քարտէզ հայ հմագրութեամ, «Նողակար», Հայագիտական ժողովածու, հ. 1, էջմիածին 1913, 203-204):

74 Լեւոն Գ.ի ամուսնութեան ընթացքում կեռան քագուհու ունեցել է 15 երեխայ (երեք անգամ զույգ), որոնցից հինգը յետագայում քագաւորել են: Հայոց գահակալների մէջ միայն այս 5 եղբայրներն են, որոնին քագաւորներ են դարձել՝ յաջորդելով միմեանց:

տի պատմութեան ծաղկուն շրջանի նշանաւոր նմոցներից է: Սիրելի կողմանի մահից չորս տարի անց, 1289ի Փետրուարի 6ին, կեանքից հեռացաւ նաեւ Լեւոն թագաւոր, իր ծաղկուն շրջանում՝ 53 տարեկան հասակում:

Հայոց Կիլիկիոյ թագաւոր Լեւոն Գ., որ դեռեւս կեանքի օրոք ստացել էր Լեւոն Մեծագործ պատուանունը, պատմութեան էջերում եւ ժողովրդական մշակոյթում անջնջելի հետք թողեց<sup>75</sup>: Նրա գերութիւնը, որ ցնցեց ժամանակի բանաստեղծ-երգիչներին՝ գուսաններին, եւ արտացոլում գտաւ միջնադարեան հայրէններում, դրսեւորում ունեցաւ նաեւ Հայր Հեւոնդ Ալիշանի երիտասարդական տարիներին գրուած (1848) բանաստեղծութիւններից մէկում<sup>76</sup>.

### ՈՂԲՔ ՀԵԹՄՈՅԻ Ի ՎԵՐԱՅ ՈՐԴԻՌՅՆ

Ո՞վ գարրեկի Հայոց գուսանի  
Ո՞վ մանկաւիկի եւ կուսանի,  
Զարդայր Հայոց սըգատրում  
Եկայք տեսէք ըզիկզ Հերում.  
Սիրու ի կուրծս ի թունի ողորմ ողորմիւ  
Լացէք լացէք զզտէրդ անբաղդ.  
Զի խաւարին ծագեաց իւր տիւ,  
Թամեան այգուն աստղունիք անաղու.  
Սեւացաւ թագ, սեւացան ծիրանիք,  
Անկաւ մական ոսկեղինիկ:  
Տու՞ն Ռուրինաց, զարքի՛ր ի կոծ,  
Եփիպո՞ս, միշտ ընտեկոց դաւանան,  
Ո՞ւր են որդեակին իմ աննըման,  
Տու՞ն Ռուրինաց, զարքի՛ր ի կոծ,  
Խաւար եհաս ազգիս Հայոց:

Ա՛յ լին նորտեր, զիմեւ կայք,  
Ասացէք ա՛յ պարոնայք,  
Ո՞ւր են որդեակին իմ գեղեցիկ,  
Ո՞ւր ծաղկահեր իմ պատանիք:  
Զի՞ լրում, զի՞ լայք... աւա՞ղ հօրս,  
աւա՞ղ

Խաւար եհաս ազգիս Հայոց:

Ընդ դարս եւ դիւրս ես ի Թաքարս  
Անհունս հատի նանապարհս,  
Զի տունս Հայոց՝ հոգս իմ բաղցրիկ  
Լիցի յամայր ինձ երշանիկ.  
Զաշաց լոյս սրտիս հասոր զիմ  
որդեակս՝  
Թորոս, Լեւոն քաջ եւ աշխոյժ,  
Դեմ թշնամեաց թողի պահնակս.  
Ո՞ն ցաւք սրտի, ո՞ն վէրք անբոյժ.  
Ո՞ւ տայր ինձ մահ ձեր փոխանակ.  
Ե՞րբ մուտ յիմեն աւերակ  
Ի վարդարին ծով Թորոսիս.  
Թելիկ կենաս՝ անց ընդ ալիս,  
Պատատեաց յիմ Լեւոնկան չար

շղթայս:  
Թորո՞ս դիւցազն, առիւծ Լեւոն,  
Նահատակաց էք դուք ի կայս,  
Հայոց մանկանց յօժար ի տօն.  
Ես մեռայ, ես գերեցայ անզաւակ...  
Հերում, ե՞րբ մուտ շիրմին ի փակ:

75 Հերում Ա. եւ Լեւոն Գ. թագաւորների կեանի ուշագրաւ դրուագներ պահպանուել են եւրոպական միջնադարեան ձեռագիր մատեաններում:

76 Տե՛ս ԱԼԻՇԱՆ, Հ. Դ., Նուազք, Վենետիկ-Սուրբ Ղազար, 1858, 161-162:

Կորեա՝ Լեւոն, Թորոս անկա՛ւ。  
Աչկումբն եւ այսն անշամանդաղ  
ի ճապաղիս քարաւեցաւ.

Չեռներազ եւ սփագնաց կորովին  
Յանգուր շղթայս տըքնի բանտին.  
Տու՛ն Ռուրինաց, զարքի՛ր ի կոծ,  
Խաւար եհաս ազգիս Հայոց:

Տու՛ն Ռուրինաց, զարքի՛ր ի կոծ,  
Խաւար եհաս ազգիս Հայոց:

Մի՛ այդպէս, մի՛ սուրբ քագաւոր.  
Գըքած է տէր եւ հըզօր,  
Սիրեաց զորդեակէդ, այլ եւ ըգֆեզ.  
Հա՛տ ըգմրմունչդ այդ աղեկէզ.

Լալականք, ի բաց գնացէք, ոչ եւս սուզ:  
Հերո՛ւմ, Հերո՛ւմ, արի փուրով,  
Զթորոս քագեաց տէր երկնաշուք.  
Իսկ Լեւոն գայ քեզ խայտալով:  
Ա՛ն եւ դու զբագ, պլասկեա զբեզ եւ գնա.  
Տո՛ւր աւետիս Կիւլիկիայ.  
Տո՛ւն Ռուրինաց լըռեցո զկոծ,  
Արեւ եհաս ազգիս Հայոց:

### ՄԱՐԻԱՆՆԱ ՏԻԳՐԱՆԵԱՆ

### Summary

## THE HISTORY OF THE SONG “TO LEO, SON OF HETHUM I” BY Fr. GHEVOND ALISHAN

MARIANNA TIGRANYAN

The bilingual “*Armenian Peasant Songs*” compiled by Father Ghevond Alishan was published in Venice in 1852. The collection of songs included about twenty folk songs from the medieval manuscripts in Venice, Vienna, Paris, London, and recorded oral tradition, which were widely circulated among Armenians as well as foreigners. The first song in the collection is an epic narrative about Leo I titled “*To Leo, the son of Hethum I*”, which tells about real historic events and heroes, such as King of Cilicia Hethum I (1215-1270) and his son Leo III (1236-1289). Paradoxical as may seem, songs with historic narrative are rare and have not reached our days through the thousand years of Armenia’s history. That is why Alishan’s publication of the song about King Leo has an exceptional value and importance. On 24 August 1266 in the gorge of Mari, near the Sev (Black) Mountains, the Mameluke army, comprised of some 30 thousand soldiers, collided with the 15-thousand Armenian troops. The clash is known in history as the battle of Mari. Thoros, Hethum’s son, died a hero’s death, while Prince Leo along with Vasil Tatar, the son of Smbat Sparapet (Constable), Leo’s uncle, were captivated by the Mamelukes and taken to Egypt, where they spent about two years in captivity. The folk songs about Leo’s captivity have reached our days in manuscripts and are classified as *hayrens* (15-syllable two-line *hayren*), which have been very popular and widely spread in the urban songs of the medieval *gusans* in the territory of the Armenian Kingdom of Cilicia. The song about Leo, published by Father Alishan, was later included in many more collections of songs. Years later, alternative versions of songs about King Leo were published by Bishop Trdat Palyan and A. Mnatsakanyan. King Leo III of Cilicia, who was revered as Leo the Metsagorts (the one who acted big), left a significant mark in history and in popular culture. His captivity, which shook the imagination of the minstrels of his time, was reflected in the medieval *hayrens* and one of the early poems (written in 1848) by Father Ghevond Alishan.